

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ**

**Նարինե Էռնեստի Միրզոյան**

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐՈՒՍԱԿՈՒԹՅԱՆ  
ՌԻՍԿԵՐԻ ՀԱՍԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ում:**

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և  
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՄԵՂՄԱԳԻՐ**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

**Գիտական դեկան՝**

Տեխնիկական գիտությունների թեկնածու, դրոշենտ՝  
Հարություն Վարազդատի Զաքոյան

**Պաշտոնական ընդունմախոսներ՝**

Տնտեսագիտական գիտությունների դոկտոր, դրոշենտ՝  
Յայկ Գերասիմի Մանացականյան  
Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, ասիստենտ՝  
Տիգրան Սերգեյի Կարապետյան

**Առաջատար կազմակերպություն՝**

ՀՀ ԳԱԱ Մ. Թոքանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 13.30 – ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՆ-ի տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թվականի հոկտեմբերի 26 –ին:

015 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տեխնիկական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր՝

Ա. Ռ. Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

**Ենոազոտության թեմայի արդիականությունը:** Զարգացող երկրներում տնտեսության զարգացման հիմնական նախադրյալներից մեկը իրավաբանական անձանց կողմից՝ առևտորային բանկերից և վարկային կազմակերպություններից վարկային ռեսուլսների ներգրավման գործընթացի բնականոն ապահովումն է: Ֆինանսական համակարգում աճող մրցակցությունը, առևտորային բանկերի կապիտալի համարժեքության վերաբերյալ ՀՀ ԿԲ նորմատիվները և Բազել II-ով (ԲազելIII) սահմանված պահանջները, շուկայում դիրքը ամրապնելու և զարգանալու ձգտումները, հատկապես ֆինանսական կայունության ապահովումը, մասնավորապես այն առևտորային կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման և կանխատեսման անհրաժեշտությունը, որոնք ունեն կամ պատրաստվում են ունենալ պարտային պարտավորություններ առևտորային բանկերի և վարկային կազմակերպությունների առջև (այսուհետ՝ փոխառու-իրավաբանական անձիք) ստիպում են առևտորային բանկերին և վարկային կազմակերպություններին ավելի ու ավելի մեծ ուշադրության արժանացնել փոխառու միջոցների կառավարմանը և պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող կազմակերպությունների վարկունակության նակարդակի գնահատմանը՝ վարկանիշ շնորհելու միջոցով: Վարկանիշը իրենից ներկայացնում է համապարփակ ցուցանիշ, որը բնութագրում է փոխառու-իրավաբանական անձի վարկունակության դասը: Վարկանշումը կատարվում է գումարային այն բոլոր ցուցանիշների հիմնան վրա, որոնք բնութագրում են փոխառու-իրավաբանական անձի եկամուտ ստանալու կարողությունը, ակտիվների բավարար լինելը, կառավարման ունակությունը, պարտավորությունների մարման պատրաստակամությունը և պարտաճանաչությունը: Վարկանշման մեխանիզմի կիրառումը և վարկանիշի շնորհումը ավարտին է հասցնում առևտորային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկունակ փոխառու-իրավաբանական անձանց ընտրությունը: Բացի այդ, վարկանիշը ուղեցույց է տրամադրվող վարկի մեծությունը որոշելիս, ֆինանսական վիճակի վերլուծության ժամանակ պահուստների ստեղծման նպատակով վարկային այրոտֆելի որակը գնահատելիս, փոխառու-իրավաբանական անձի մնանկության հավանականության ցուցանիշը հաշվարկելիս, գործարքների իրականացման գնային պայմանները սահմանելիս, ռիսկի վճարի տոկոսադրույթը հաշվարկելիս, տրամադրվող վարկի գծով սպասելի և չնախատեսված կորուստների մեծությունը գնահատելիս և մի շարք այլ դեպքերում: Հաշվի առնելով ՀՀ-ում միջազգային վարկանշող գործակալությունների (Moody's, Fitch, S&P), ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից իրականացվող փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման աննշան ծածկույթը՝ ՀՀ առևտորային բանկերը և վարկային կազմակերպությունները ստիպված են ինքնուրույն վարկանշել պոտենցիալ փոխառու-իրավաբանական անձանց: Կերպինս պահանջում է առևտորային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց վերաբերող մեծաքանակ տվյալների և ցուցանիշների ընտրություն, վերլուծություն և գնահատում: Յուրաքանչյուր առևտորային բանկ, ուստ Բազելյան կոմիտեի, պետք է ինքնուրույն ընտրի ներքին վարկանշման իր կողմից կիրավող մոդելը:

Մասնագիտական գրականության մեջ վարկանշմանը մի շարք հեղինակներ են անդրադարձել՝ Օ. Լավորչինը, Ե. Շատալյովան, Ա.Դ. Շերեմետը, Կ. Ռ. Արմենակյանը, Ա. Ս. Զանվեյսանը, Ի. Վիշնյակովը, Վ. Ստուպակովը և այլքը: Վերջիններս առաջարկել են վարկանշման իրենց մոդելները՝ համապատասխան ցուցանիշների համակարգով, շնորհվող բալերով, դասերի քանակով և այլն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, որոնց հաշվի առնելով նշակվել է ներքին վարկանշման մեթոդական մոտեցում, որի մեջ շտկված են փոխառու-իրավաբա-

նական անձանց ներքին վարկանշման գործող մեխանիզմների թերությունները և որը հիմնված վերջիններիս առավելությունների, ինչպես նաև տնտեսության և ֆինանսական միջավայրերի ժամանակակից միտումների վրա:

Վերոնշյալն իր ազդեցությունն է ունեցել ներկայացված ատենախոսության թեմայի ընտրության վրա՝ պայմանավորելով վերջինիս արդիականությունը:

**Նետազոտության նպատակը և խնդիրները:** Ասենախոսության թեմայի հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համարի գնահատումը և կանխատեսումը ներքին վարկանշից շնորհման ալգորիթմի միջոցով՝ վարկային ռիսկի քանակական և փորձագիտական գնահատման հիման վրա: Նշված նպատակի իրագործման համար ատենախոսության շրջանակ-ներում տարանջատվել են հետևյալ խնդիրները.

- իրավանացնել անվճարունակության ու սնանկության ռիսկերի գնահատման և վարկանշման մոդելների և դրանց կառուցման ժամանակակից միտումների ուսումնասիրություն ու վերլուծություն:
- վերլուծել իրապարակված ներքին վարկանշման մոդելների առավելությունները և թերությունները,
- բացահայտել իրապարակված ներքին վարկանշման մոդելների կիրառելիության առանձնահատկությունները ՀՀ ֆինանսական համակարգում,
- վերլուծել վարկանշային գնահատման գործընթացը և վարկանշից օգտագործման ուղղությունները,
- իրականացնել վարկային ռեսուրսների գծով սպասելի և չնախատեսված կորուստների և շնորհվող ներքին վարկանիշերի միջև փոխադարձ կապի ձևավորում,
- իրականացնել վարկային ռեսուրսների սահմանաչափերի և շնորհվող ներքին վարկանիշերի միջև փոխադարձ կապի ձևավորում,
- վարկանշման գործընթացի իրականացման շրջանակներում գնահատել և կանխատեսել փոխառու-իրավաբանական անձի գործունեությամբ բնորոշ որակական ռիսկերը,
- մշակել ներքին վարկանշման մեթոդական մոտեցում՝ վարկային ռիսկի քանակական և փորձագիտական գնահատմանը Ենթարկվող գործունեցությամբ ընտրության, վերլուծության և գնահատման հիման վրա:

### **Նետազոտության օբյեկտը և առարկա:**

Ասենախոսության թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների հիմնական օբյեկտը՝ ՀՀ-ում գործող առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում սպասարկվող փոխառու-իրավաբանական անձիք են: Նետազոտության առարկան ՀՀ առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համարի գնահատման և կանխատեսման հիմնախնդիրներն են ներքին վարկանիշի շնորհման միջոցով:

### **Նետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:**

Կատարված հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտերկրյա և հայենական տնտեսագետների՝ փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման մեխանիզմներին առնչվող հետազոտությունները, իրապարակումները և մշակված մոդելները:

Տեղեկատվական հիմք են հանդիսացել փոխառու-իրավաբանական անձանց

Ֆինանսատնտեսական գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքներ, ՀՀ ԿՐ նորմատիվ իրավական ակտեր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերն ու վիճակագրական տվյալները և այլն:

Ալեքսանդր Մանուկյանը պատճենաբանության ժամանակակից աշխատավայրում կատարել է առաջարկ աշխատավայրում համեմատական և տնտեսամաթեմատիկական մեթոդներ:

### **Ենոազոտության գիտական նորույթը:**

Ալեքսանդր Մանուկյանը պատճենաբանության ժամանակակից աշխատավայրում համեմատական և տնտեսամաթեմատիկական մեթոդներ:

- մշակվել է փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մեթոդական մոտեցում, որը հիմնված է վարկային ռիսկի քանակական և փորձագիտական գնահատումների վրա,
- իրականացվել է փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման վրա ազդրող քանակական և փորձագիտական գնահատումները ենթարկվող գործների վերլուծությունը, ընտրությունը գնահատումը,
- իրականացվել է փոխառու-իրավաբանական անձանց գործունեության որակական ռիսկերի ընտրությունը և գնահատումը:
- առևտորային քանկերում և վարկային կազմակերպություններում վարկային ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել է շնորհված ներքին վարկանշերի, ռիսկերի վճարի և վերջիններին համապատասխանեցված պահուստների մեծության սանդղակ:

### **Ալեքսանդր Մանուկյան և իրավաբան Շրջանակությունը:**

Ներկայացվող ատենախոսության թեմայի հետազոտությունը ևս մեկ քայլ է առևտորային քանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մոդելների բարելավման գործընթացում, քանի որ վերջինս կարուցված է ներքին վարկանշման գործող մոդելների թերությունների հաշվի առնելով և առավելությունները գարգացնելով:

Ալեքսանդր Մանուկյանը պատճենաբանության ժամանակակից աշխատավայրում մասնավորապես փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշումը, կարող են օգտակար լինել առևտորային քանկերի, վարկային և առևտորային կազմակերպությունների, ինչպես նաև ներքին վարկանշման հիմնահարցերով գրանցում մասնագետների համար:

### **Ենոազոտության արդյունքների փորձարկումը և իրապարակումները:**

Ալեքսանդր Մանուկյանը պատճենաբանության ժամանակակից աշխատավայրում մոտեցումը կիրառվել է առևտորային կազմակերպությունների ներքին վարկանշի շնորհման գործընթացում:

Աշխատանքի տեսամեթոդական, ինչպես նաև գործնական արդյունքները գեկուցվել և քննարկվել են ԵՊԴ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ դասախոսների միջազգային գիտական կոնֆերանսներում և տեղ են գտել վերջիններիս նյութերի ժողովածումներում, ինչպես նաև իրապարակվել են գիտական մամուլում:

Քենինակի կողմից ատենախոսության թեմայի շուրջ լուսաբանված հիմնահարցերը իրապարակվել են 4 գիտական հոդվածներում:

### **Ալեքսանդր Մանուկյան ծավալը և կառուցվածքը:**

Ալեքսանդր Մանուկյանը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 127 տպագիր էջ՝ առանց հավելվածների:

## ԱՏԵՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատեսախոսության ներածության մեջ հիմնավորված են հետազոտվող թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակները և հիմնական խնդիրները, սահմանված են օբյեկտը և առարկան, շարադրված են հետազոտության գիտական արդյունքները և գիտական նորույթները, ինչպես նաև ներկայացված են հետազոտության արդյունքների տեսական և գործնական կիրառման հնարավորությունները:

Ատեսախոսության առաջին՝ «Փոխարու-իրավաբանական անձանց վարկանշման մոդելների համեմատություն և դրանց կառուցման զարգացման միտումների վերլուծություն», գլխում կատարվել է արդյունաբերության և առևտորի ճյուղերի վերլուծություն, իրականացվել է միջազգային վարկանշային գործակալությունների կողմից (Standard and Poor's, Moody's, Fitch) վարկանշման ընդիհանուր դրույթների վերլուծություն, ներկայացվել են վարկանշման մոդելները և դրանց կառուցման ժամանակակից միտումները:

2009 թվականին ՀՀ կառավարությունը նախաձեռնեց միջոցառումներ, որոնք ուղղված էին սկսված ճգնաժամի հետևանքների շուտափույթ վերացմանը, ինչպես նաև ճյուղում կառուցվածքային խնդիրների լուծմանը և ներդրումային ծրագրերի խթանմանը: 2009 թվականին վարկավորման գործընթացը արդյունաբերության ոլորտում ակտիվացավ, քանի որ ՀՀ կառավարությունն սկսեց իրականացնել տնտեսության կայունացման վարկավորման ծրագիրը՝ Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրած պետական վարկի միջոցներով: Կատարված աշխատանքի արդյունքում 2010 թվականին արձանագրվեց արդյունաբերության ոլորտի 9.7 տոկոս աճ<sup>1</sup>: Սակայն 2012 և 2013 թվականներին այդ ցուցանիշը նվազեց՝ կազմելով համապատասխանաբար 2.7 և 0.5 տոկոս: 2014 թվականին արդյունաբերության ոլորտի աճը կազմել է 2.7 տոկոս<sup>2</sup>: Արդյունաբերության ոլորտի աճի տեմպերի նվազումը կարելի է բացարձի ինչպես համաշխարհային տնտեսական գործոնների ազդեցությանը, այնպես էլ ՀՀ տնտեսության ներքին գործոններով:

Հանաշխարհային ճգնաժամն իր ազդեցությունն է ունեցել տնտեսության բոլոր յոյների վրա՝ ազդելով ոչ միայն վերջիններին ցուցանիշների նվազման, այլ նաև կառուցվածքի վրա: 2009 թվականին առևտորի շրջանառությունը 2008 թվականի համեմատ նվազել էր 4.9 տոկոսով: Բացի այդ 2009 թվականին փոխվել էր նաև առևտորի շրջանառության կառուցվածքը. նախորդ տարվա համեմատ մանրածախ առևտորը աճել էր ի վեցամյակի և ավտոմեքենաների առևտորի, ինչը պայմանավորված էր ճգնաժամի հետևանքով սպառողների եկամուտների կրճատմանը: 2011 թվականին<sup>3</sup> նախորդ տարվա համեմատ ճյուղում առևտորի շրջանառության աճ գործոցեց՝ 3.5 տոկոս, իսկ մատուցվող ծառայությունների ոլորտում՝ 11 տոկոս, ինչը վկայում էր ՀՀ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման մասին: Դաշտորդ տարի ճյուղի աճը նվազեց, սակայն 2014 թվականին<sup>2</sup> 2013-ի համեմատ 4.2 տոկոս աճ արձանագրվեց: Առևտորի ճյուղի աճը վերջին տարիներին արտացոլվում է նաև առևտորային բանկերի կողմից ռեզիլենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքում, որտեղ առկա է առևտորի ոլորտի գերակայություն:

Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության հիմնական ճյուղերին առևտորային բանկերի կողմից տրված վարկերի տեսակարար կշիռները 2015 թվա-


<sup>1</sup> ՀՀ կառավարության գործունեության արդյունքներ՝ <http://report.gov.am/>

<sup>2</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականին, ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am), Երևան, 2015

<sup>3</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականին, ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am), Երևան, 2012


կամի փետրվարի որությամբ<sup>4</sup>, որտեղ ակնհայտ է առևտորի և արդյունաբերության ճյուղերի գերակայությունը՝ ինչով էլ պայմանավորված է Վերջիններիս մեծ տեսակարար կշիռը առևտորային բանկերի չաշխատող ակտիվներում (գծապատկեր 2)<sup>5</sup>:

**Գծապատկեր 1. Առևտորային բանկերի կողմից ռեզիլիենտներին տրված վարկերի ընտրված հիմք ճյուղերի կառուցվածք (արտահայտված համամասնական տոկոսներով):**



Առևտորային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռներն ըստ տնտեսության բոլոր ճյուղերի 2015 թվականի օգոստոսին՝ 2014 թվականի համեմատությամբ աճել են, ինչը վկայում է առևտորային բանկերի կողմից փոխարությարարական անձանց վարկունակության գնահատման խնդիրների հրատապ լուծման անհրաժեշտության նասին:

**Գծապատկեր 2. Առևտորային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռներն ըստ տնտեսության ճյուղերի (արտահայտված տոկոսներով):**<sup>7</sup>



Standard and Poor's-ը, Moody's-ը և Fitch-ը կազմում են միջազգային վարկանշային գործակալությունների «Մեծ Երակ»<sup>8</sup>, որոնք վարկանիշ են շնորհում ֆինանսական ինստիտուտների լայն շրջանակին՝ առևտորային բանկեր, ֆինանսական և առևտորային կազմակերպություններ և այլն<sup>9</sup>: Վերջիններս տարիներ շարու-

<sup>4</sup> ՀՀ ԿՐ տեղեկագիր (փետրվար 2015թ), վարկային ներդրումներ, առևտորային բանկերի կողմից ռեզիլիենտներին տրված վարկանիշ ճյուղային կառուցվածք:

<sup>5</sup> ՀՀ ԿՐ տեղեկագիր (փետրվար 2015թ), վարկային ներդրումներ, առևտորային բանկերում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռ ըստ ոլորտների:

<sup>6</sup> Գծապատկերը կառուցված է հեղինակի կողմից [4]-ի և [5]-ի տեղեկատվության հիման վրա:

<sup>7</sup> Գծապատկերը կառուցված է հեղինակի կողմից [4]-ի և [5]-ի տեղեկատվության հիման վրա:

<sup>8</sup> Տյուսնով Տ. Մ., Ռեйтинговые агентства и их роль на рынке структурированных финансовых инструментов // Корпоративные финансы, СПб, 2010, номер 3. стр 81.

<sup>9</sup> [www.standardandpoors.com](http://www.standardandpoors.com), [www.moody's.com](http://www.moody's.com), [www.fitchratings.ru/ru/regulatory/ratings-definitions.html](http://www.fitchratings.ru/ru/regulatory/ratings-definitions.html)

նակ կիրառում են իրենց կողմից մշակված վարկանշման մոդելները (որոնց միայն ընդհանուր դրույթներն են հանրությանը հայտնի) և արդեն կարողացել են բավականին մեծ վիճակագրություն հավաքագրել իրենց կողմից շնորհվող վարկանշերի իրատեսական լինելու կամ չլինելու վերաբերյալ: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ նույնիսկ զարգացած երկրներում փոխառու-իրավաբանական անձանց քիչ տոկոսն ունի մասնագիտացված գործակալությունների կողմից տրված վարկանշից (հաշվի առնելով զգալի ծախսերն ու պահանջվող տեղեկատվության մեծաքանակ լինելը) առևտորային բանկերը և վարկային կազմակերպությունները ստիպված են ինքնուրույն վարկանշել առտենցիալ փոխառու-իրավաբանական անձանց: Այն դեպքում, եթե փոխառու-իրավաբանական անձն ունի միջազգային վարկանշման գործակալությունների կողմից շնորհված վարկանշից, վերջիններս վարկային գործարքում պարզապես հիմնվում է տվյալ վարկանշից վրա:

Մասնագիտական գործառության մեջ վարկանշմանը անդրադարձել են մի շարք հեղինակներ, որոնցից յուրաքանչյուրը առաջարկում է ներքին վարկանշման իր մոդելը՝ իր առավելություններով և թերություններով (մասնավորապես որոշ մոդելներում բացակայում են ֆինանսական ցուցանիշների և փորձագիտական գնահատման գործակիցների հստակ խմբեր, ֆինանսական ցուցանիշների և փորձագիտական գնահատման գործակիցների գործվ շնորհվող բալերի միջակայքեր, հստակեցված չեն քանակական և փորձագիտական գնահատմանը ներարկվող գործակիցների կշիռները, որոշ Վարկանշման մոդելներում առաջարկվում և վերլուծվում են միմյանց հետ ուժեղ կոռեւյացիոն կապ ունեցող գործակիցներ և ցուցանիշներ, չի վերլուծվում շնորհված ներքին վարկանշերի և տրամադրվող վարկային ռեսուրսների սահմանաչափերի միջև առկա կապը և այլը): Բացի այդ՝ ՀՀ-ում՝ կախված տնտեսության առանձնահատկություններից՝ շուկայի տարողունակությունից, կազմակերպության գործունեության ծավալներից, արտահանման դժվարություններից և այլն, առկա են վարկավորման առանձնահատկություններ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում փոխառու-իրավաբանական անձանց շնորհվող ներքին վարկանշերի վրա:

Կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի վերլուծությունը բազմափուլ գործընթաց է: Այն պահանջում է առևտորային բանկերի և վարկային կազմակերպությունների համապատասխան մասնագետների կողմից փոխառու-իրավաբանական անձին վերաբերվող մեծաքանակ տվյալների և ցուցանիշների ճշշտընտրություն և վերլուծություն՝ վերջինիս վարկանշի շնորհելու նպատակով, որը թույլ կտա հիմնավորված կառավարչական որոշումներ ընդունել՝ վարկավորման ռիսկերը հաշվի առնելով: Այդ է պատճառը, որ առկա է ներքին վարկանշման այնպիսի մոդելի պահանջ, որը համապարփակ տեղեկատվություն կտրամադրի, արդի կլինի տվյալ ժամանակահատվածում, հասկանալի և ոյուրին կիրառելի կլինի, հնչակ նաև կիամապատասխանի տվյալ երկրի ֆինանսական համակարգի մենթավիտետին: Բազեյան կոմիտեն<sup>10</sup> նշում է, որ առևտորային բանկերը պետք է մշակեն սեփական ներքին վարկանշման մոդելներ և կարողանան ապացուեն, որ իրենց ներքին վարկանշման մոդելները ապահով են և անփոփոխ ժամանակի ընթացքում:

Ատենախոսության երկրորդ՝ «Վարկանշային գնահատումը իբրև վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման հիմք», գլխում ներկայացվել են վարկանշային գնահատման գործընթացը և վարկանշից օգտագործման ուղղությունները, կատարվել է առևտորային բանկերում փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մոդելների համեմատական վերլուծություն, կատար-

<sup>10</sup> The New Basel Capital Accord, Basel Committee, 2001. p 32.

Վել է վարկային ռեսուլտների գծով սպասելի և չնախատեսված կորուստների գնահատում, որոշվել են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց տրամադրվող վարկային ռեսուլտների սահմանաշափերը:

Յուրաքանչյուր երկրում գոյություն ունեն փոխառու-իրավաբանական անձանց գործունեության արանձնահատկություններ՝ պայմանավորված շուկայի մեջությամբ, բանկային մենքալիտետով, քաղաքական և իրավական դաշտերով և այլն: Վերոնշյալ պատճառները հաշվի առնելով, ըստ Քաղելյան կոմիտեի, յուրաքանչյուր առևտրային բանկ պետք է ունենա իր ներքին վարկանշման մոդել: Փոխառու-իրավաբանական անձանց ձեռնուու է վարկանշումը, քանի որ լավ վարկանշից կապահովվի վերջներին հանդեպ կոնտրահենտների վստահությունը, վարկային ռեսուլտներ ներգրավելու գործընթացը ավելի կյուրացնի և այլն: Օրյենտիվ վարկանշից նվազեցնում է վարկունակ փոխառու-իրավաբանական անձանց վարկային ռեսուլտների մասնակի կամ ամբողջությամբ տրամադրման մերժման ռիսկը: Վարկանշման գործընթացի առաջին փուլը առևտրային բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան ստորաբաժնման կողմից վարկանշվող փոխառու-իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն է, ընդ որում ներկայացվող ներքին վարկանշման մերժուական մոտեցման համաձայն, անհրաժշտ տեղեկատվությունը չպետք է սահմանափակվի միայն պաշտոնական ֆինանսական հաշվետվություններով, անհրաժշտ է վերլուծել նաև կառավարչական հաշվետվությունները, որոնք փոխառու-իրավաբանական անձը պետք է տրամադրի առևտրային բանկին կամ վարկային կազմակերպությանը վարկային ռեսուլտներ ներգրավելիս:

Ներկայացվող ներքին վարկանշման մշակված մերժուական մոտեցման համաձայն վարկանշի շնորհելու նպատակով քանակական գնահատման շրջանակներում պետք է օգտագործվի հետևյալ տեղեկատվությունը՝ փոխառու-իրավաբանական անձի հաշվապահական հաշվեկշիռ, կանոնադրական կայիտալում համահմարդիների կողմից դրամական մուտքերի գծով պարտքերի վերաբերյալ տեղեկանք, անձնակազմի աշխատավարձերի գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանք և այլն: Ներկայացվող մշակված ներքին վարկանշման մերժուական մոտեցման համաձայն փորձագիտական գնահատման շրջանակներում վարկանշի շնորհելու նպատակով պետք է օգտագործել հետևյալ տեղեկատվությունը՝ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրապարակված տվյալներ, առևտրային բանկից քաղվածք փոխառու-իրավաբանական անձի վերջին մեկ տարվա ընթացքում բանկային հաշվեկշիռի շրջանառության վերաբերյալ, փոխառու-իրավաբանական անձի վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն, տեղեկատվության այլ տիպի աղբյուրներ, որոնց կարելի է գնահատել որպես հավաստի, ի դեպ յուրաքանչյուր առևտրային բանկ կամ վարկային կազմակերպություն ինքն է սահմանում տեղեկատվության իր կողմից ընդունելի հավաստիության աստիճանը: Բազելյան կոմիտեն նշում է, որ առևտրային բանկերը գնայով ավելի ու ավելի են կատարելագործում փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման իրենց կողմից կիրավող մոդելները<sup>11</sup> և հետզհետեւ ավելի ստուգ, իրատեսական և վստահելի վարկանշեր են կարողանում շնորհել, ինչը բացարձակ անհրաժեշտություն է, քանի որ առևտրային բանկերը աշխատում են արտաքին գործոնների անընդհատ փոփոխության պայմաններում:

Վարկանշման մննիթորինգը վարկանշման գործընթացի կարևորագույն փուլերից

<sup>11</sup> Range of Practise in Banks Internal Rating systems, Базельский комитет по банковскому надзору, 2000. стр. 9.

մեկն է: Վարկանիշի մոնիթորինգը նպատակահարմար է իրականացնել վեց ամիսը կամ տարեկան մեկ անգամ: Այն դեպքում, եթե երկրի կամ համաշխարհային ասպարեզի քաղաքական կամ տնտեսական դաշտում տեղի են ունենում էական փոփոխություններ, մոնիթորինգը կարող է իրականացվել արտահերթ՝ վերլուծելու և գնահատելու համար տվյալ գործոնի ազդեցությունը փոխառու-իրավաբանական անձի շնորհված ներքին վարկանիշի վրա: Կրտերկրյա առևտրային բանկերում կիրառվող ներքին վարկանշման մոդելներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Ուստաստանի Դաշնությունում գործող առևտրային բանկերին անդրադառնալիս բախվում ենք վերջիններիս նմանությանը ՀՀ առևտրային բանկերին, քանի որ ԱՊԴ բոլոր երկրներում բանկային համակարգը, բանկային կուլտուրան նույն էր և մինչ այժմ, կարծես, բանկային համակարգի այժմանանակյա մենթալիտետը դժվար է վերափոխվում ժամանակակից միտումներին համապատասխան: Իսկ եվլողական և ամերիկյան առևտրային բանկերին անդրադարձը հաճախ ի ցույց է դնում վերջիններիս գերազանցությունը և կողմնորոշում տեղական առևտրային բանկերին վերափոխման հետագա ընթացքի ժամանակ:

Բագելյան կոմիտեի կողմից մշակված առևտրային բանկի կայիտակի համարժեքությանը վերաբերող համաձայնագրում մեծ ուշադրություն է դարձվում բանկային ռիսկերի եռթայն վերլուծությանը, մասնավորապես տարբերակվում են սպասելի և չնախատեսված կորուստները որևէ ռիսկի հետ կապված: Առևտրային բանկը փոխառու-իրավաբանական անձի հետ վարկային պայմանագիր կնքելիս հաշվարկված սպասելի կորուստների հատուցման նպատակով ավելացնում է բազային տոկոսադրույքը: Սակայն այս դեպքում, եթե վարկի անվերադարձելիության հավանականությունը մեծ է, ներկայացվող մշակված ներքին վարկանշման մեթոդական նոտեցման համաձայն վարկային ռեսուրսը չպետք է տրամադրվի նույնիսկ բարձր տոկոսադրույքով և պահանջարկի առկայության պայմաններում: Նման կերպ առևտրային բանկերը որոշակի վարկանիշից ցածր այլևս վարկ չեն տրամադրում (օրինակ ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական նոտեցման շրջանակ-ներում CC-ից ցածր վարկանիշ ունենալու դեպքում փոխառու-իրավաբանական անձին վարկ չպետք է տրամադրել): Սպասելի կորուստների գծով պահուստներ ստեղծելիս սպասելի կորուստների մեջությունից պետք է հանել վերջիններիս այն մասը, որը հատուցվում է բազային տոկոսադրույքի բարձրացման հաշվին (հավելյալ տոկոսադրույք), այլապես նիևնույն ռիսկը կապահովարվի երկու անգամ:

Սպասելի հնարավոր կորուստների հատուցման նպատակով առևտրային բանկերը ծնավորում են վարկերի և վարկային ռիսկ պարունակող այլ վարկային ակտիվների գծով պահուստներ: Ստեղծվող պահուստները համարվում են առևտրային բանկի համար ծախս, որի հատուցումը որոշ չափով ներառված է ռիսկի վճարի մեջ: Ռիսկի վճարը իրենից ներկայացնում է այն հավելյալ գումարը, որը փոխառու-իրավաբանական անձը ստիպված է վճարել, քանի որ վերջինիս հետ համագործակցությունը առևտրային բանկը կամ վարկային կազմակերպությունը որակել է որպես ռիսկային՝ շնորհելով վերջինիս ռիսկայնության տվյալ մակարդակին համապատասխանող ներքին վարկանիշ: Ըստ այդմ, տրամադրվող վարկային ռեսուրսի տոկոսադրույքը(1), պետք է հավասար լինի՝

$$S_{\text{Ա}} = S_{\text{Բ}} + S_{\text{Ծ}} + S_{\text{Ը}}$$
 (1)

որտեղ՝

$S_{\text{Ը}}$  – վարկային ռեսուրսի ներգրավման տոկոսադրույք,

$S_{\text{Բ}}$ - բազային տոկոսադրույք,

$S_{\text{Ծ}}$  - շահույթի տոկոսադրույք,

$S_{\text{Ը}}$  - ռիսկի վճարի տոկոսադրույք (հավելյալ տոկոսադրույք):

**Այլուսակ 1. Ծնորհված ներքիմ վարկանիշերի, ռիսկի վճարի և ձևավորվող պահուստների ծավալների համապատասխանեցված սանդղակ:**<sup>12</sup>

Վարկանիշ	Ռիսկի վճար	Պահուստների ծավալ
AAA	0%	1%
AA	0%	1%
A	0%	1%
BBB	(0...0.5%)	1%
BB	(0.5...1%)	1%
B	(1...2%)	1%
CCC	(2...3%)	2%
CC	(3...4%)	2%
C	-	-
D	-	-

Բազային տոկոսադրույթը և շահույթի տոկոսադրույթը ընդհանուր առնամբ լինում են համարժեք բոլոր փոխառու-իրավաբանական անձանց համար, իսկ ռիսկի վճարի մեծությունը ուղղակիորեն կախված է փոխառու-իրավաբանական անձին շնորհված ներքին վարկանիշից: Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հաշվարկված ռիսկի վճարը, հանաձայն ներքին վարկանշման ներկայացվող մեթոդական մոտեցման, պետք է մեծանա վարկանիշի հշեցմանը գուգընթաց և հակառակը: Օրինակ՝ AAA վարկանիշի ռիսկի վճարը կարող է լինել 0%, իսկ BB-ինը՝ (0.5%...1%) (այլուսակ՝ 1.) և այլն:

Ռիսկի վճարի մեծությունը առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները պետք է որոշեն ելեկտրոնային բանկային համապատասխան գործազնան ծրագրից և սահմանված կազմակերպություններին կազմակերպություններին պահանջվող համապատասխան պահանջը: Ռիսկ-ախորժակը (որի հակառակ կողմը հանդիսանում է ռիսկի խուսափելը) իրենից ներկայացնում է որոշակի եկամուտ ստանալու նպատակը որոշակի մակարդակի ռիսկ ստանանելու ցանկությունը<sup>13</sup>: Ֆինանսական հաստատություններին անհրաժեշտ է սահմանել իրենց ռիսկ-ախորժակը կապված տարրեր տեսակի և մակարդակների ռիսկերի ստանաձան հետ՝ հաշվի արնելով այդպիսի ռիսկերի կառավարման իրենց կազմակերպչական ունակությունը<sup>13</sup>: Օրինակ՝ ներկայացվող ներքին վարկանշման մշակված մեթոդական մոտեցման շրջանակներում առաջարկվում է CC-ից ցածր մերքին վարկանիշի դեպքում փոխառու-իրավաբանական անձին մերժել վարկային ռիսկ պարունակող գործարքներ կնքելիս:

Առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները վարկանշում են փոխառու-իրավաբանական անձանց, ստեղծում են ընդհանուր պահուստ և, կախված շնորհիվ ներքին վարկանիշից, կատարում հատկացում 1-2% -ի սահմաններում (այլուսակ՝ 1.), հետևաբար բարձր վարկանիշից դեպի ցածր՝ ակտիվների գծով պահուստների հատկացումների տոկոսադրույթը պետք է ավելանա:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց տրամադրվող վարկային ռեսուլսների հանդեպ սահմանաշափերի կիրառումը վարկային ռիսկի կառավարման մեթոդներից մեկն է: Վերջինիս նպատակը վարկային ռիսկի նվազեցումն է՝ վարկային ռեսուլսի բացարձակ

<sup>12</sup> Այլուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

<sup>13</sup> Միջազգային ֆինանսական Կորպորացիա (IFC), ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման ստանդարտներ, ուստանական ծերնարկ, 2012, 6-7 է:

մեծության սահմանափակման միջոցով<sup>14</sup>. Առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձանց հետ ակտիվային գործարքների գծով սահմանաշափերի կիրառումը սովորաբար իրականացվում է «վարկանիշ-սահմանաշափ» համապատասխանեցված սանդղակի միջոցով<sup>14</sup>: Յուրաքանչյուր առևտրային բանկ կամ վարկային կազմակերպություն՝ կախված ռեսուլսների տեղաբաշխման իր կողմից իրականացվող քաղաքականությունից և ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվներից, պետք է ընտրի վարկային սահմանաշափերի հաշվարկման առկա մոդելներից որևէ մեկը կամ մշակի իր սեփական «վարկանիշ-սահմանաշափ» համապատասխանեցված սանդղակը (այսուսակ՝ 2.)՝ վարկային ռեսուլսների սահմանաշափերի իր համար ընդունելի առավելագույնի, միջինի և ցածրի սահմաններով:

**Այլուսակ 2. Մշակված ներքին վարկանշնան մեթոդական մոտեցման շրջանակ-ներում կազմված «վարկանիշ-սահմանաշափ» համապատասխանեցված սանդղակ:**

Վարկանիշներ	Սահմանաշափեր (հազ. դրամ)
AAA	
AA	
A	Առավելագույն
BBB	
BB	
B	Միջին
CCC	
CC	
C	Ցածր
D	-

Կատարված վերլուծությունների հիման վրա նպատակահարմար ենք համարում առաջարկվող ներքին վարկանշնան մեթոդական մոտեցման շրջանակներում վարկանշային դասերը խնբավորել ըստ տրամադրվող վարկային ռեսուլսների սահմանաշափերի հետևյալ կերպ. AAA-ից BBB վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց սահմաննել առավելագույն սահմանաշափ, BB-ից CCC- միջին, CC-ից C՝ ցածր, իսկ D վարկանիշ ունեցողներին մերժել վարկավորման մեջ, քանի որ վերջիններս անվճարունակ են: Արևորային բանկերը և վարկային կազմակերպությունները օրինակ փոխարժեքի պատճառների առկայության դեպքում կարող են փոփոխել տրամադրվող վարկային ռեսուլսների սահմանաշափերի շեմային արժեքները (օրինակ փոխարժեքի կտրուկ տատանում, տնտեսության որոշ ցուլերի անկում և այլն), ինչպես նաև վարկանշային դասերի և վերջիններիս համապատասխանեցված սահմանաշափերի խմբերը:

